# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 11/154-Ա

«24» 07 2024թ. ք. Երևան

## ԼԱԼԱ ԱՐՍԵՆԻ ԲԵԳՈՅԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 23-ի եզրակացությունը և Լալա Բեգոյանի դիմումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 151-րդ կետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Լալա Արսենի Բեգոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-2) պաշտոնին:

2. Լալա Բեգոյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ